Ինչ պետք է հիշել

- Ծնողները կամ խնամակալները կարող են վերանայման (փոփոխության) հայց ներկայացնել:
- Երեխաների օգնության տեղական գործակալության միջոցով վերանայման հայց ներկայացնելու համար, Ձեր գործը պետք է բաց լինի:
- Գործը կարող է բացվել ցանկացած ժամանակ:
- Կախված ստացված տեղեկություններից՝ Ձեր ապրուստադրամը կարող է ավելանալ կամ պակասել: Դատարանի որոշումը կարող է չլինել այն, ինչ Դուք սպասում էիք:
- Երեխաների օգնության տեղական գործակալության միջոցով ապրուստադրամի վերանայման համար դիմելն անվճար է:
- Եթե անգամ Ձեր հայցը մերժվի, Դուք դեռ կարող եք դատարան գնալ, և դատավորը որոշում կկայացնի Ձեր գործի վերաբերյալ: Այդ հարցում Ձեզ կարող է օգնել ընտանեկան օրենքի խորհրդատուն:

Կալիֆոռնիայի երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտը իրավաբանական ծառայություններ չի տրամադրում ծնողներին կամ խնամակալներին:

Առնոլդ Շվարցենեգեր, Կալիֆոռնիա
նահանգի նահանգապետ

Քիմբըրլի Բելշե, Կալիֆոռնիայի
առողջապահության և սոցիալական
ծառայությունների գործակալության քարտուղար

Դեյվիդ Մաքսվել-Ջոլլի՝, Երեխաների օգնության
ծառայությունների դեպարտամենտի տնօրեն

1-866-249-0773 (անվճար)
www.childsup.ca.gov

PUB 252 (9/08)

Օգնություն Կալիֆոռնիայի երեխաներին

Երեխայի ապրուստադրամի չափը փոխելը

Երեխաների օգնության
ծառայությունների
դեպարտամենտ

Ինչպե՞ս կարող եմ ես փոխել երեխայի ապրուստադրամի չափը

Դուք կարող եք խնդրել վերանայել դատարանի որոշումը և ավելացնել կամ պակասեցնել ապրուստադրամի չափը:

Ո՞վ կարող է խնդրել վերանայում կատարել

- չխնամող ծնողը.
- խնամող կողմերը (ծնողները, խնամակալները և այլն).
- երեխաների օգնության տեղական գործակալությունը.
- այլ նահանգների երեխաների օգնության գործակալությունները:

Ինչպե՞ս դիմեմ վերանայման համար

- Դիմեք երեխաների օգնության Ձեր տեղական գործակալությանը:
- Ինքներդ գնացեք դատարան: Դատարանի ընտանեկան օրենքի խորհրդատուն (նա չի հանդիսանում երեխաների օգնության գործակալության աշխատակիցը) անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում և կարող է օգնել Ձեզ այդ հարցում:
- Մասնավոր փաստաբան վարձեք, որը Ձեզ հետ միասին դատարան կներկայանա:

Ե՞րբ կարող եմ դիմել վերանայման համար

Դուք կարող եք վերանայման համար դիմել այն ժամանակ, երբ փոխվում են Ձեր կյանքի պայմանները, ինչպես, օրինակ՝

- Ձեզ կրճատում կամ հեռացնում են աշխատանքից.
- Դուք նոր կամ լրացուցիչ աշխատանքի եք անցնում.
- Ձեր կամ մյուս ծնողի եկամուտն ավելանում կամ պակասում է.
- փոխվում է խնամակալության կամ այցելելու իրավունքի կարգավիճակը.
- փոխվում է ընտանիքի անդամների թիվը.
- Դուք անաշխատունակ եք դառնում.
- Դուք բանտարկվում կամ ձերբակալվում եք.
- Ձեզ զորակոչում են գործող բանակ:

Ի՞նչ տեղեկություններ պետք է ներկայացնել

Որպեսզի երեխաների օգնության տեղական գործակալությունը զբաղվի Ձեր գործի վերանայման հարցով, Ձեզ անհրաժեշտ է տեղեկություններ ներկայացնել հետևյալի վերաբերյալ.

- եկամուտի և ծախսերի.
- երեխայի խնամքի հետ կապված ծախսերի.
- բժշկական ապահովագրության.
- անաշխատունակության (SSI, SDI, SSA և այլն).
- բանտարկված կամ կալանված լինելու կարգավիճակի.
- անաշխատունակության նպաստների.
- կենսաթոշակի.
- խնամակալության և այցելությունների մասին պայմանավորվածությունների:

Ի՞նչ կարող եմ ակնկալել

Քննելուց հետո Ձեր և մյուս ծնողի կողմից տրամադրված (վերը նշված) տեղեկությունները, երեխաների օգնության տեղական գործակալությունը կորոշի, թե արդյո՞ք Ձեր գործը վերանայման ենթակա է, և եթե այո, որքան պետք է կազմի ապրուստադրամը: Վերանայումը հիմնավորված կլինի, եթե ապրուստադրամը փոփոխվի առնվազն 20 տոկոսով կամ $50- ով, կախված նրանից, թե դրանցից որն է ավելի փոքր:

Եթե Դուք և մյուս կողմը նախապես համաձայնության գաք ապրուստադրամի չափի վերաբերյալ, Դուք կարող եք պարտավորագիր (համաձայնագիր) ստորագրել, որը պետք է ներկայացվի դատարանին:

Եթե նման համաձայնություն չկայանա, ապա Ձեզ դատարան ներկայանալու ծանուցագիր կուղարկվի, որտեղ դատավորը կամ հանձնակատարը կորոշի ապրուստադրամի չափը: Եթե մյուս կողմն ապրում է մեկ այլ նահանգում, երեխաների օգնության տեղական գործակալությունը կխնդրի, որ այդ նահանգը քննի գործը և վերանայման հայց ներկայացնի: